ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
N 03/23

Ք.Եղեգնաձոր

16.01.2023թ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը, ի դեմս Գլխավոր քարտուղար Ա.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Պետական մարմին), մի կողմից և Եղեգնաձորի Երաժշտական դպրոց ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Ա.Կարապետյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Կազմակերպություն), մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագրի(ծրագրի դասիչ՝ 1198) շրջանակներում նախատեսված ընթացիկ դրամաշնորհը(այսուհետև՝ դրամաշնորհ) և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2022թ N 2111-ն որոշմամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պետական մարմինը պարտավորվում է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 09.05.01.04. «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային,փողային և լարային նվագարանների գծով ուսուցման կազմակերպում» ծրագրի իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կազմակերպությանը, իսկ Կազմակերպությունը ստանձնում է պարտավորություն 2023 թվականի ընթացքում իրականացնել ազգային,լարային և փողային նվագարանների բաժիններում սովորողների ուսման վճարի փոխհատուցում 17 սովորողի համար / ամսեկան 18157 ՀՀ դրամ/, այդ թվում՝ ազգային նվագարաններ (ուդ, քամանչա, քամանի, քանոն, սազ, թառ, բամբիռ, սանթուր, դուդուկ, շվի, ութակ՝ փոքր շվի, պարկապզուկ) թվով 6 սովորող, լարային նվագարաններ (թավջութակ, ալտ, տավիղ, կոնտրաբաս, ջութակ) թվով 10 սովորող, փողային նվագարաններ (հոբոյ, ֆագոտ, շեփոր, ալարափող, տրոմբոն, տուբա) թվով 1 սովորող :

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով կատարված ծառայության ընդհանուր գինը կազմում է 3704.0(երեք միլիոն յոթ հարյուր չորս հազար) ՀՀ դրամ:

2.2 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Կազմակերպության գանձապետական հաշվին՝ համաձայն հավելվածի:

3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.2 Կազմակերպությունը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պետական մարմնի ներկայացուցչի հնարավորությունը:

3.3 Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վայոց Ձորի մարզպետարան
Ք.Եղեգնաձոր Շահումյան 5
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900351072021

ՀՎՀՀ 08907717

Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Եղեգնաձորի,,Եղեգնաձորի երաժշտական ,, ՊՈԱԿ
Ք.Եղեգնաձոր Շահումյան 9
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900358000314

ՀՎՀՀ 08900681

Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

16 հունվարի 2023թ կնքված պայմանագրի

NN	Ծառայության անվանումը	2023 թ վճարվելիք գումարները աճողական												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	2	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1	Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում		381,5	763,0	1081,7	1400,4	1718,7	2164,3	2609,9	3055,6	3271,7	3487,8	3921,9	3921,9
	Ընդամենը													

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք. Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ ֆինանսական գործառ վարչ
Հ/Հ 900351082020
ՀՎՀՀ 08907717
Մարզպետարանի գլխավոր բուհալտեր

Ա. ԿԱՌ

Եղեգնաձորի Երաժշտական դպրոց՝ ՊՈԱԿ
Ք. Եղեգնաձոր Շահումյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
hh 900358000314
Տնօրեն՝

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ